**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

26 դեկտեմբերբեր 2017թ.
ժամը $12^{00}$

**Մասնակցում էին**
Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրոսյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան:

**Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Գ. Վարդանյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Վարդանյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «իրային միջոցների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Ավանգարդ» ՍՊԸ |
| 2 | «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ |
| 3 | «ԳԴԱԿ» ՍՊԸ |
| 4 | «ՊԱՀԱՊԱՆ» ՍՊԸ |
| 5 | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ |
| 6 | «Միհր Զարգարյան» ՍՊԸ |
| 7 | «Արցախ ԿԿԱՄ» ՓԲԸ |
| 8 | «Լենտեքս» ՍՊԸ |
| 9 | «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ |
| 10 | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 11 | «Վանգաս» ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2 . «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Վարդանյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Պահապան» ՍՊԸ-ի և «Միհր Զարգարյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի վճարման պահանջագրերի, որտեղ «վճարողի ստորագրություններ» մասում արտացոլվում էր միայն ՍՊԸ-ների տնօրենների կողմից լիազորված անձերի էլ. ստորագրությունները, ինչի հետ կապված հանձնաժողովը քվեարկության արդյունքում որոշեց, հետագա ռիսկերից խուսափելու նպատակով, մասնակիցների բանկերից հայցել տեղեկատվություն առ այն, թե լիազորված անձերի կողմից էլ. ստորագրությամբ վավերացված վճարման փաստաթղթերը արդյոք ենթակա են կատարման թե ոչ:

26.01.2018թ.-ին, հիմք ընդունելով 24.01.2018թ.-ին պատվիրատուի ղեկավարի կողմից ստացված հանձնարարականը, գնահատող հանձնաժողովը շարունակեց սույն ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հայտերի գնահատումը: Հետագա գնահատման ընթացքում պարզվեց, որ «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլ. հայտի, մասնավորապես, ներկայացված Հավելված N 2.1-ում ամբողջական չէ հրավերով պահանջվող իրական շահառու հանդիսացող անձի տվյալները՝ անձի հայրանունը: 26.01.2018թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և սահմանված կարգով ծանուցել մասնակցին՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, մասնակցի կողմից ներկայացված «հայտի ապահովում» (հավելված 10) հավելվածի մեջ մասնակցի կողմից լրացված բանկային հաշվեհամարի մեջ առկա են ավել նիշեր (գծեր), ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցի հայտը մերժվեց:

«Լենտեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, մասնակցի կողմից ներկայացված «հայտի ապահովում» (հավելված 10) հավելվածի վճարման պահանջագրի մեջ մասնակցի կողմից նշվել է ամսաթիվ, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցի հայտը մերժվեց:

«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, մասնակցի կողմից 12-րդ չափաբաժնի մասով ներկայացված «գնային առաջարկ» (հավելված 5) հավելվածի մեջ գնային առաջարկի բաղադրիչների (ինքնարժեք և ԱԱՀ) գումարը սխալ է, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցի հայտը ,տվյալ չափաբաժնի մասով, մերժվեց:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Գ. Վարդանյան)

**3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 11 մասնակից.**

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Նախահաշվային գումար | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպություն | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպություններ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանում | գինը | | անվանում | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | բրդե կտոր /Կտոր կ/բ արտիկուլ 2212(2211) դեղնականաչ ավուն/ | մետր | 921 | 7 368 000 | «Գդակ» ՍՊԸ | 6 055 575 | 7 266 690 | «Պահապան» ՍՊԸ | 6 060 180 | 7 272 216 |
| | | | | | | | | «Քանաքեռի ԿՖ» ՍՊԸ | 6 063 250 | 7 275 900 |
| 2 | բրդե կտոր /Կտոր կ/բ արտիկուլ 2311 դեղնականաչ ավուն/ | մետր | 3700 | 22 570 000 | «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ | 13 532 750 | 16 239 300 | «Գդակ» ՍՊԸ | 17 760 000 | 21 312 000 |
| | | | | | | | | «Քանաքեռի ԿՖ» ՍՊԸ | 17 883 333 | 21 460 000 |
| | | | | | | | | «Պահապան» ՍՊԸ | 18 481 500 | 22 177 800 |
| 3 | փողկապներ /Փողկապ/ | հատ | 39 000 | 33 540 000 | «Պահապան» ՍՊԸ | 25 350 000 | 30 420 000 | «Քանաքեռի ԿՖ» ՍՊԸ | 27 950 000 | 33 540 000 |
| | | | | | | | | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 32 500 000 | 39 000 000 |
| 4 | փողկապներ /Փողկապ՝ սև գույնի/ | հատ | 8000 | 6 880 000 | «Պահապան» ՍՊԸ | 5 200 000 | 6 240 000 | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 6 666 666.67 | 8 000 000 |
| 5 | գուլպաներ/ Գուլպա կիսաբրդյա / | զույգ | 249 200 | 68 280 800 | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 53 785 666.67 | 64 542 800 | «Լենտեքս» ՍՊԸ | 53 370 333.33 | 64 044 400 |
| | | | | | | | | «Ավանգարդ» ՍՊԸ | 54 824 000 | 65 788 800 |
| 6 | գուլպաներ /Գուլպա բրդյա/ | զույգ | 20 528 | 9 381 296 | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 7 663 786.67 | 9 196 544 | «Լենտեքս» ՍՊԸ | 7 338 760 | 8 806 512 |
| | | | | | | | | «Ավանգարդ» ՍՊԸ | 7 817 746.67 | 9 381 296 |
| 7 | գուլպաներ /Գուլպա բամբակյա/ | զույգ | 358 400 | 66 662 400 | «Միեր Զարգարյան» ՍՊԸ | 48 981 333.33 | 58 777 600 | «Լենտեքս» ՍՊԸ | 48 682 666 | 58 419 200 |
| | | | | | | | | «Գդակ» ՍՊԸ | 50 176 000 | 60 211 200 |
| | | | | | | | | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 55 253 333.34 | 66 304 000 |
| 8 | ներքնաշապիկներ /Ներքնաշապիկ բամբակյա/ | հատ | 613 500 | 21 472 500 | «Ավանգարդ» ՍՊԸ | 11 758 750 | 14 110 500 | «Պահապան» ՍՊԸ | 13 779 810 | 16 535 772 |
| | | | | | | | | «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ | 13 803 750 | 16 564 500 |
| | | | | | | | | «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ | 14 059 375 | 16 871 250 |
| | | | | | | | | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 17 382 500 | 20 859 000 |
| 9 | գոտիներ /Գոտի լայն/ | հատ | 36 000 | 40 968 000 | «Ավանգարդ» ՍՊԸ | 30 870 000 | 37 044 000 | «Արցախ ԿԿԱՄ» ՍՊԸ | 33 660 000 | 40 392 000 |
| | | | | | | | | «Գդակ» ՍՊԸ | 38 700 000 | 46 440 000 |
| | | | | | | | | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 37 500 000 | 45 000 000 |
| 10 | գոտիներ /Գոտի տաբատի/ | հատ | 21 300 | 17 040 000 | «Ավանգարդ» ՍՊԸ | 9 372 000 | 11 246 400 | «Արցախ ԿԿԱՄ» ՍՊԸ | 9 478 500 | 11 374 200 |
| | | | | | | | | «Գդակ» ՍՊԸ | 12 247 500 | 14 697 000 |
| | | | | | | | | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 16 862 500 | 20 235 000 |
| 11 | ձեռնոցներ /Ձեռնոց՝ հինգմատնյա ֆլիսից/ | զույգ | 48 800 | 48 604 800 | «Ավանգարդ» ՍՊԸ | 40 056 666.67 | 48 068 000 | «Պահապան» ՍՊԸ | 40 260 000 | 48 312 000 |
| | | | | | | | | «Գդակ» ՍՊԸ | 46 360 000 | 55 632 000 |
| | | | | | | | | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 46 766 666.67 | 56 120 000 |
| 12 | սրբիչ՝ վաֆլե, բամբակյա | հատ | 60 000 | 21 600 000 | «Ավանգարդ» ՍՊԸ | 15 750 000 | 18 900 000 | «Վանգաս» ՍՊԸ | 16 350 000 | 19 620 000 |
| | | | | | | | | «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ | 16 500 000 | 19 800 000 |
| | | | | | | | | «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ | 16 800 000 | 20 160 000 |
| | | | | | | | | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ | 17 775 000 | 21 300 000 |

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/;

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

4.1 02.02.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Գդակ» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնով՝ «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ-ն, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով՝ «Պահապան» ՍՊԸ-ն, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով՝ «ԳԵՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, 7-րդ չափաբաժնով՝ «Մհեր Զարգարյան» ՍՊԸ-ն, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով՝ «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Գ. Վարդանյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Վարդանյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓԶ վարչության նիստերի դահլիճում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

| | |
|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | **Վ. Գասպարյան** |
| **Գնահատող** | **Գ. Ոսկանյան** |
| **Գնահատող** | **Կ. Բրուտյան** |
| **Գնահատող** | **Ս. Նիկոյան** |
| **Գնահատող** | **Վ. Պապյան** |
| **Գնումները համակարգող՝** | **Գ. Վարդանյան** |

**02.02.2018թ.**